# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՍ ԹԻ ԷՅ-Ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Էս թի էյ | Բաճկոն կարճաթև և տաբատ՝ ամենօրյա Համազգեստի լրակազմը բաղկացած է բաճկոնից և տաբատից, բաճկոնի թևքերին և կրծքի աջ և ձախ կողմերում կարված մեկական տարբերանշանների ինքնակպչուններից և լրակազմում ներառված, բայց համազգեստի վրա չամրացված, ասեղնագործ 2 հատ թևքանշանից և 2 հատ կրծքանշան գրվածքներից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի ոչ պակաս քան 235 գրամ մակերեսային խտությամբ, ոչ պակաս քան 44% բուրդ, ոչ ավել քան 54% պոլիէսթեր և ոչ ավել քան 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից: Գունավորումը և ձևը համաձայն Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշի: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնը կարճաթև է, կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ ծալվածքով թևքերից: Ունի դիմացի և հետին կոկետկաներ, թևքերի ձևվածքը՝ երեք կտորով, օձիքի լանջափեշերը միացվում են կենտրոնական կոճկվածքով՝ երեք կոճակ, լայն բացվածքով, մինչև դիմացի կոկետկա: Օձիքը սլաքաձև ծայրերով, ծալովի, կանգունով: Բաճկոնը 6,0-6,5սմ լայնքով գոտիով է (մանժետով), կողքերից փակ, էլաստիկ ժապավեններով |

| | | |
|---|---|---|
| | | ձգված: Միայն կանգունի հատվածը կարված է նույն գույնի, բամբակյա կտորից (քոր չառաջացնելու համար): Օձիքի միացման կարում՝ կենտրոնում, մշակվում է կախիչ: Ուսագոտին և թևքերը ձևավոր են, վզակարից մինչև թևքերը ներառյալ՝ զարդակարերով: Թևատակերին տեղադրված են նույն գույնի թելով զարդակարված 6 հատ 5մմ-անոց օդափոխման անցքեր (ըստ նմուշի): Կարճ թևերը (1/3) երիզված են 3,0սմ լայնքով նույն երեսացու կտորից զարդակարով ամրացված երիզներով: ՈՒսերի վրա 2 հատ օղակավոր ուսադիրներն են, որոնք անցկացված են ախլակային ուսադիրների միջով: Ախլակային ուսադիրները սկսվում են ուսակարի տակից և եռանկյուն կտրվածքի կենտրոնում, ամրանում վզի հատվածում գլխիկավոր (14մմ) կոճակներով, ունեն 15-16սմ երկարություն, 4,9-5,0սմ լայնք և սլաքաձև ձևվածքի հատվածում կոճակի օղակ: Ախլակների վրա անցկացվող օղակավոր ուսադիրներն, պատա՝ կոչման տարբերանշաններով են, ունեն 10.0սմ երկարություն և 5,0-5.2 սմ լայնություն, դարձերեսը հաստացված և ամրացված է սոսնձվող շերտով, ուսադիրների երեսը հայկական առնամենտի զարդանախշերով են, ջակկարդ մեքենայի գործվածքով (ձևաչափը՝ ըստ Պատվիրատուի նմուշի), վրան նշված զինվորական կոչումներով: Թևքանշանները և կրծքանշանները պատրաստված են՝ նույն գործվածքի վրա, մուգ կանաչ թելով, ասեղնագործությամբ, եզրերը մաքուր, merrow մեքենայով եզրակարված: Կրծքամասի գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսի կրծքանշաններ՝ աջ կրծքին ամրացնելու համար «ՀՀ ԱԱԾ» գրվածք, ձախ կրծքին՝ ինքնակպչունով ամրացող «արյան կարգ»: Թևքերի վրա ուսակարից 8.0 սմ դեպի ներքև ասեղնագործված (լցակարված ապլիկացիայի մեթոդով) 9.0×7.0 սմ կողմերով, գունավոր, սեպաձև թևքանշաններն են՝ ձախ թևքի համար ՀՀ զինանշանը, աջին՝ ՀՀ ԱԱԾ խորհրդանշանը: Ասեղնագործությունը՝ նույն երեսացու կտորի վրա փայլուն, բաց դեղնականաչավուն գույնի թելերով: Թևքանշանների, կրծքանշանների և ուսադիրների նմուշները Պատվիրատուն կտրամադրի չափս հասակային և կոչումային տվյալների տրամադրմանը զուգահեռ պայմանագրի կնքումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տաբատը կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու և աստառացու կտորների համադրությամբ է: Տաբատի աջ հետնամասում կափույրով փակվող և կոճկվող կտրված գրպանն է , որը գաղտնի կոճկվում է պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին |

| | | |
|---|---|---|
| | | 6 հատ կամրջակներով է, նախատեսված 4,5սմ լայնքով գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-2.0 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք, կապույտ կամ կանաչ գույնի մահուդից երիզներ (քանակները և չափսերը՝ ըստ Պատվիրատուի պահանջի): Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա մուգ կանաչավուն գույնի, 90գ/մ2 խտությամբ գործվածքից աստառ: Պիտակավորումը: Բաճկոնի ծոցագրպանին և տաբատի գոտու ներսի մասին պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման տարեթիվը և խնամքի վերաբերյալ տեղեկատվություն: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա պետք է կախված լինի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման տարեթիվը: Թևքանշաններն ու կրծքանշանները՝ առանձին փաթեթավորված և պիտակավորված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

СТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 3 | | |